

**Գիտության կոմիտեն՝ նոր իրավական ակտերով**

Կառավարության հաստատմանը կներկայացվեն ոլորտի զարգացման ռազմավարությունն ու ուղղությունները

Գիտության զարգացման ռազմավարական ծրագիրը, որը շուտով կներկայացվի կառավարությանը, իր մեջ ամփոփում է գիտության ոլորտի **10** տարվա ռազմավարությունը եւ ապահովելու է ոլորտի դինամիկ եւ նպատակային զարգացումը: Ռազմավարության նախագծում ներկայացված են գիտության ոլորտի թիրախները, դրանց նպատակներն ու մարտավարությունը: Այն բավական հավակնոտ ծրագիր է: Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանի տեղեկացմամբ, ռազմավարության ընդունումից մի քանի ամիս հետո արդեն հնարավոր կլինի մշակել գիտության զարգացման **5**-ամյա ռազմավարական ծրագիրը իր հստակ ժամանակացույցով, որտեղ կնախանշվեն բոլոր ենթադրվող գործողությունները: Իսկ թիրախներից նա նախանշեց ենթակառուցվածքների արդիականացումը, գիտական ներուժի վերարտադրմանը միտված գործողությունների ծրագիրը, հիմնարար եւ կիրառական գիտությունների զարգացման ուղղությամբ շեշտադրումը, միջազգային համագործակցության զարգացումը եւ այլն: Հաջորդ կարելուրագույն փաստաթուղթը, որը եւս կներկայացվի կառավարության հաստատմանը, գիտության ոլորտի գերակա ուղղություններն են, որոնց որոշումը բավական բարդ խնդիր է եւ հետազոտական աշխատանք է պահանջում: Որոշման նախագծով նախատեսվում է սահմանել գիտության ոլորտի զարգացման **6** գերակա ուղղություն: Հայագիտությունը, որպես մեր երկրի համար կարելուրագույն նշանակության բնագավառ, իր առաջնահերթ տեղը պետք է ունենա գիտության զարգացման ուղղություններում:

Գիտության ոլորտի ֆինանսավորման նոր կարգերի ընդունումը եւս կարելուր փաստաթուղթ է այն տեսանկյունից, որ մինչեւ այսօր դրանք եղել են բավական թերություններով: Նոր կարգերի ընդունումը հնարավորություն կտա ներմուծել եւ կիրառել անկախ փորձագիտական համակարգ, որը գործածվում է ողջ աշխարհում: Այն թույլ կտա անցնել ծրագրային ֆինանսավորման եւ կնպաստի գիտական կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացմանը: Բացի այդ, հնարավորություն կստեղծվի ուշադրություն դարձնել միջազգային համագործակցությանը եւ համաֆինանսավորվող ծրագրերի իրականացմանը: Այս նախագծի ընդունման նպատակը, Սամվել Հարությունյանի տեղեկացմամբ, ՀՀ պետությունից գիտական եւ գիտատեխնիկական գործունեությանն ուղղված ֆինանսավորման ձեւերի կատարելագործումն է: Գիտության ֆինանսավորումը, Ս. Հարությունյանի խոսքերով, առ այսօր իրականացվել է հիմնականում պետության կողմից, սակայն որպեսզի գիտությունը կարողանա ինքնազարգացում ապահովել, պարտավոր է ներգրավել նաեւ ֆինանսավորման այլ աղբյուրներ, մասնավորապես աջակցություն ստանալ միջազգային գործընկերներից: Ոլորտում մասնավոր ներդրողներ ներգրավելու համար նախ եւ առաջ պետք է բարձրացնել գիտական հետազոտությունների նկատմամբ վստահությունը: Ըստ կոմիտեի նախագահի, գիտական արդյունքի առելուրայնացման խնդիրը բոլոր երկրներում էլ բավական «ցավոտ շրջան» է ապրում: Հայաստանը միայն իր ուժերով չի կարողանա խնդիրը հաղթահարել: ԱՊՀ երկրների շրջանակներում օգտագործելով միջազգային փորձը, այս խնդիրը, ըստ բանախոսի, իր լուծումը կստանա:

Գիտական ամսագրերի հրատարակմանն անդրադառնալիս նա տեղեկացրեց, որ Հայաստանում այսօր տպագրվում է մոտ **80** ամսագիր, որոնց մեծամասնությանը, ըստ նրա, դժվար է գիտական որակավորում տալը: Առաջիկա տասը տարիների ռազմավարության մեջ, որպես թիրախ, նախանշվել է նաև այս խնդիրը: Սամվել Հարությունյանի խոսքերով՝ նախ պետք է ուսումնասիրել արտերկրի փորձը եւ մրցունակ դարձնել նաև Հայաստանում տպագրվող ամսագրերը: Այս ուղղությամբ ձեռնարկվող բոլոր միջոցները առաջիկա տարիներին հնարավորություն կտան գոնե **4—5** ամսագիր տեղադրել միջազգային գիտատեղեկատվական ցանցում:

**Լուսինե ՆԱԶԱՐՅԱՆ**



**«Գիտությունը խիստ ծերացել է»**

«2009թ. ԿԳՆ գիտության պետական կոմիտեի գերակա խնդիրն էր ապահովել գիտության ոլորտը կարգավորող իրավական դաշտի հայեցակարգային, ռազմավարական եւ իրավական հիմքերը», - այսօր կազմակերպված ասուլիսի ժամանակ հայտնեց ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը:

Նրա ներկայացմամբ՝ 2009 թ. կոմիտեի կողմից մշակվեցին եւ ներկայացվեցին մի շարք կարեւոր իրավական ակտեր: Ս. Հարությունյանը խոսեց գիտության ոլորտի զարգացման ռազմավարության մասին՝ նշելով, որ ՀՀ գիտության ոլորտի զարգացման ռազմավարությունն ամրագրում է 2011-2020 թվականներին գիտության ոլորտի հեռանկարային զարգացմանն ուղղված պետական քաղաքականությունը: Նրա խոսքերով՝ ռազմավարական ծրագրերի մշակումը կապահովի գիտության զարգացումը:

Այնուհետեւ նա խոսեց գիտության ոլորտի զարգացման գերակա ուղղությունների մասին: «Մա հետազոտական լուրջ աշխատանք է պահանջում, գերակա ուղղությունների որոշումը ողջ աշխարհում կատարվում է 3-4 տարին մեկ անգամ՝ կապված տնտեսության այս կամ այն ոլորտի զարգացման հեռանկարների եւ ծրագրման հետ», - ասաց նա:

«Ոլորտներից ամենակարեւորներից մեկը հայագիտության զարգացումն է: Հայագիտությունը՝ որպէս առաջնային ոլորտ, հայտարարվել է մի քանի տարի առաջ: Չի բացառվում, որ հայագիտությունը, որպէս առանձին ոլորտ, ներկայացվի առանձին ռազմավարությամբ»:

Անդրադառնալով գիտության ոլորտի ֆինանսավորման նոր կարգին՝ Ս. Հարությունյանն ասաց. «Մինչ օրս ֆինանսավորման կարգերը եղել են թերություններով: Ներկա կարգերը հնարավորություն կտան ներմուծել անկախ փորձագիտական համակարգերը, կիրառել դրանք, անցնել ծրագրային ֆինանսավորման: Ակնհայտ է, որ ռազմավարության մեջ ֆինանսերը պետք է ուղղորդել որեւէ նպատակի, ոչ թե փոշիացմանը»: Նրա խոսքերով՝ այս որոշման նախագծերի ընդունման նպատակը ՀՀ պետական բյուջեից գիտական եւ գիտատեխնիկական գործունեությանն ուղղված ֆինանսավորման ձեւերի կատարելագործումն է:

Համեմատելով գիտության ներկայիս վիճակը մի քանի տարի առաջվա հետ՝ նա ասաց. «ՀՀ գիտությունը ԱՊՀ երկրներում եւ ՀՀ-ում նույնն է: Խորհրդային տարիներին Հայաստանը ԽՍ-ի համար կարեւոր գիտական դեր էր կատարում, եւ մեծաթիվ ինստիտուտների թիվը պատճառաբանված էր, իսկ հիմա՝ ոչ, թեւէ նախկինի համեմատ գիտնականների եւ գիտական աշխատողների թիվը հիմա ավելի քիչ է՝ մոտ 7.500: Խորհրդային տարիների հետ համեմատությամբ գիտությամբ զբաղվողներից 25-40 տարեկանների թիվը նվազել է: Գիտությունը խիստ ծերացել է, պետք է երիտասարդացնել այն, քանի որ ունենք շատ լավ կադրեր: Մենք սրա ուղղությամբ եւս աշխատում ենք, եւ հույս ունենք, որ նշված ծրագրերով աշխատելու դեպքում 2020թ. մենք կունենանք գիտության ասպարեզում մրցունակ երկիր», - ասաց նա:

**Մարիամ Մուղղուսյան**

**ՀՀ գիտական տեղեկատվական մակարդակը բարձրացնելու նպատակով Գիտության պետական կոմիտեն ուսումնասիրում է արտասահմանյան փորձը**

Հայաստանում այսօր 80 եւ ավելի գիտական ամսագրեր կան, որոնց մի մասը չի համապատասխանում գիտական ամսագրի չափանիշներին: Այս հարցը ներառված է գիտության զարգացման ռազմավարության ծրագրում, քանի որ ոլորտի խնդիրներից է նաեւ գիտական տեղեկատվության հարցը: Նման գնահատական տվեց ՀՀ Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանն այսօր հրավիրված ասուլիսում՝ տեղեկացնելով, որ այս ուղղությամբ որոշակի ծրագրեր իրականացվում են. անհրաժեշտություն է առաջացել ուսումնասիրել արտերկրի փորձն այս բնագավառում, եւ մի քանի երկրի փորձ կոմիտեն արդեն ուսումնասիրել է:

Ըստ նրա՝ հարկավոր է ներմուծել ամսագրերի «ազգային ազդեցության գործակից» գաղափարը եւ այն մրցունակ դարձնել միջազգային ասպարեզում: «Կան մեթոդներ, որ մեր ամսագրերին հնարավորություն կտան ներառվել միջազգային գիտատեղեկատվական ցանց: Դրանցից են՝ ամսագրերի անգլալեզու հրատարակումը, խմբագրական կազմում արտերկրից ճանաչված, այդ թվում նաեւ՝ հայազգի գիտնականների ընդգրկումը: Այդ բոլոր միջոցառումները կբերեն նրան, որ մեր ամսագրերը կդառնան հեղինակավոր», - ասաց նա՝ հույս հայտնելով, որ առաջիկա 3-4 տարվա ընթացքում առնվազն 5-6 ամսագիր կմտնի միջազգային գիտատեղեկատվական ցանց: Գիտպետկոմի նախագահի խոսքով, Հայաստանում այսօր կան լավ ամսագրեր, որոնցում տպագրվում են բավական բարձր մակարդակի աշխատանքներ:

Նման մի ամսագիր տպագրվում է «Ֆիզիկա» անունով, որն իր վարկանիշով աշխարհի 13 հազար լավագույն գիտական ամսագրերի շարքում 5 700-րդ տեղում է: «Դա, ամեն դեպքում, վատ ցուցանիշ է Հայաստանի համար, քանի որ մեր երկրում գիտական մակարդակը բավականին բարձր մակարդակի վրա է: Համապատասխան միջոցառումներից հետո կարծում եմ՝ հեղինակավոր ամսագրեր կունենանք: Դա շատ կարեւոր խնդիր է հայաստանյան գիտության վարկանիշի բարձրացման առումով», - ավելացրեց նա:

## **Հայաստանում նախատեսված է ստեղծել ռուս-հայկական ինովացիոն կենտրոն**

ԵՐԵՎԱՆ, 25 ՓԵՏՏՐՎԱՐԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ԱՊՀ երկրների գիտական ներուժը կոորդինացնելու նպատակով Հայաստանում նախատեսված է ստեղծել ռուս-հայկական ինովացիոն կենտրոն: Ինչպես այսօր հրավիրված ասուլիսում ասաց ՀՀ Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը, այդ կենտրոնի հիմնումը ԱՊՀ երկրների շրջանում դիտարկվելու է որպես պիլոտային ծրագիր: «Հույս ունեմ, որ մինչև մարտի վերջ այն կստեղծվի, համապատասխան ֆինանսավորումն արդեն կա, որից հայկական կողմի ներդրումը կկազմի ընդհանուր գումարի 10, իսկ ռուսական կողմինը՝ 90 տոկոս», - ասաց նա:

Ըստ կոմիտեի նախագահի՝ կենտրոնը հնարավորություն կտա ԱՊՀ երկրների շրջանում միացյալ ուժերով վաճառքի հանել գիտական արտադրանքը: «Մասավոր ներդրումներ ներգրավելու համար նախ պետք է լուծվի գիտության արտադրության առևտրայնացման հարցը: Մեր մասնավոր հատվածը գիտական հետազոտությունների նկատմամբ հետաքրքրություն չի ցուցաբերում, նույնն ամբողջ հետխորհրդային տարածքում է, իսկ կենտրոնը գիտության առևտրայնացման հնարավորություններ կբացի», - ասաց նա: Մ.Հարությունյանը կարեւորեց միջազգային կապերի ամրապնդումը գիտության ոլորտի զարգացման համար:

Կոմիտեն այժմ իրականացնում է հայ-ֆրանսիական համատեղ ծրագրեր, մասնավորապես՝ 2 լաբորատորիաների հիմնման, 1 ցանցային եւ 9 կանոնավոր ծրագրերի շրջանակներում, որոնք ֆինանսավորվում են 50/50 հարաբերակցությամբ: Առաջիկայում ծրագրված է գիտական համաֆինանսավորման պայմանագիր կնքել նաեւ Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի հետ, իսկ ապրիլին համագործակցության փաստաթուղթ կստորագրեն նաեւ Բելառուսի գիտական կենտրոնի հետ:

**ՀՀ կառավարությունն առաջիկայում քննարկի գիտության ոլորտի զարգացման  
ռազմավարության տասնամյա ծրագիրը**

ՀՀ կառավարությունում առաջիկայում քննարկման կղերվի գիտության ոլորտի զարգացման տասնամյա ռազմավարական ծրագիրը՝ նախատեսված 2011-2020 թթ-ի համար: Ինչպես ասյօր հրավիրված ասուլիսում նշեց ՀՀ Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը, կառավարություն կներկայացվեն նաեւ գիտության ոլորտի գերակա ուղղությունների եւ ֆինանսավորման նոր համակարգի ներդրման վերաբերյալ փաստաթղթերը:

Ըստ նրա, գիտության զարգացման համար նշված կարեւորագոյն փաստաթղթերի կազմման եւ մշակման համար ավելի քան 1,5 տարի գիտության կոմիտեն եւ Գիտությունների ազգային ակադեմիան լուրջ աշխատանքներ են տարել: «Այս երեք փաստաթղթերը բազմիցս քննարկվել են գիտական տարբեր կառույցներում: Փաթեթը վերջերս ներկայացվել է նաեւ ՀՀ վարչապետի մոտ, եւ որոշում է ընդունվել մարտ ամսին ԳԱԱ-ում գիտական լայն հանրության շրջանում կազմակերպել ամփոփիչ քննարկում, որից հետո արդեն կառավարությունը կընդունի փաստաթղթերը», - ասաց նա: Գիտության զարգացման ռազմավարությունն առաջիկա 10 տարվա ծրագիրն է, որի կատարմամբ ձեւակերպված է 2020 թվականի տեսլականը:

«ՀՀ վարչապետին ներկայացրած տեսլականում Հայաստանի Հանրապետությունը գիտական հետազոտությունների մշակումների ոլորտն առաջընթաց զարգացնող, միջազգային չափանիշներին բավարարող, տնտեսական ու սոցիալական առաջընթացի, գիտելիքի ստեղծման եւ առաջատար երկիր է: Սրա հետ կապված՝ բազմաթիվ առաջարկներ ու վեճեր են եղել. շատերը գտնում էին, որ այն շատ հավակնոտ է, բայց, իմ կարծիքով, ցանկացած ռազմավարություն պետք է լինի այդպիսին: Նախատեսում ենք այն առաջիկայում հստակեցնել», - ավելացրեց նա:

Ս.Հարությունյանի խոսքով, ռազմավարությունն ընդունելուց հետո մոտակա մի քանի ամիսների ընթացքում կմշակվի նաեւ գիտության զարգացման արդեն 5-ամյա ծրագիրը՝ իր ժամանակացույցով: Ծրագրում հստակեցված են այն թիրախները, որոնց ուղղությամբ կկատարվեն հետագա աշխատանքները: Դրանցից են՝ կայուն զարգացում ապահովող գիտության կառավարման նոր համակարգի ստեծումը, ենթակառուցվածքների արդիականացումը, գիտական ներուժի վերարտադրմանը միտված գործողությունների ծրագիրը, հիմնարար եւ կիրառական գիտությունների կարեւորումը, միջազգային համգործակցության զարգացումը, համաշխարհային գիտատեխնիկական տարածքում սեփական դիրքի ստեղծումն ու ամրացումը: Որպես առանձին ճյուղ՝ առանձնացվում է նաեւ հայագիտության ոլորտի առաջնային զարգացումը:

«Չի բացառվում, որ հայագիտության զարգացման համար առանձին ռազմավարական ծրագիր ներկայացվի», - ասաց նա: Ս.Հարությունյանը նշեց, որ բավական բարդ էր գերակա ուղղությունների որոշումը: Դրանք պարզելու համար ոլորտը համակարգող գիտական կոմիտեն մանրամասնորեն ուսումնասիրել է հանրապետության ամբողջ գիտական ներուժը, գիտական հիմնարկների վիճակը, նյութատեխնիկական բազան, վերջին

տարիներին հրատարակած աշխատանքները միջազգային լուրջ գիտատեղեկատվական ցանցերում:

«Գերակա ուղղությունների որոշումը ցանկացած պետությունում կատարվում է 3-4 տարին մեկ անգամ՝ կախված պետության տնտեսության զարգացման՝ այս ոլորտի հեռանկարներից ու ծրագրերից», - ընդգծեց նա: Գերակա ուղղությունների որոշմամբ հնարավորություն է ստրվում այդ ոլորտները թիրախային ֆինանսավորել: Գիտության ոլորտի ֆինանսավորման արդյունավետության բարձրացման նպատակով մշակվել է ֆինանսավորման նոր համակարգ, որը հստակեցնում է ՀՀ պետական բյուջեից գիտական ու գիտատեխնիկական գործունեությանն ուղղված ֆինանսավորման ձևերը:



## **Գիտության ֆինանսավորման համար մշակվել են նոր կարգեր**

ՀՀ գիտության պետական կոմիտեն մշակել է գիտության ոլորտի ֆինանսավորման նոր կարգեր, որոնց նպատակը Հայաստանի պետական բյուջեից գիտական եւ գիտատեխնիկական գործունեությանն ուղղված ֆինանսավորման ձևերի արդակիանացումն է: Ինչպես այսօր հրավիրված ասուլիսում նշեց Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը, փաստաթղթով հստակեցվում են ֆինանսավորման չափանիշներն ու մեխանիզմները՝ ապահովելով միջոցների հասցեագրված հատկացում եւ դրանց օգտագործման պատասխանատվության բարձրացում:

## **ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի կողմից մշակված իրավական ակտերի նախագծերը**

Այսօր տեղի ունեցավ ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Ս. Հարությունյանի մամուլի ասուլիսը՝ «Գիտության ոլորտի կարևոր իրավական ակտերը» թեմայով:

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի հաղորդմամբ՝ Ս. Հարությունյանը ներկայացրեց 2009 թվականին Կոմիտեի կողմից մշակված և Կառավարություն ներկայացված կարևոր իրավական ակտերի նախագծերը, որոնք վերաբերում են գիտության ոլորտի զարգացման ռազմավարությանը, ոլորտի զարգացման գերակա ուղղություններին և ֆինանսավորման նոր կարգերին:

ՀՀ գիտության ոլորտի զարգացման ռազմավարությունը ամրագրում է 2011-2020 թվականների հեռանկարային զարգացմանն ուղղված պետական քաղաքականությունը: Այն ոլորտի ներկա վիճակի, առկա հիմնախնդիրների, հեռանկարային զարգացման նպատակների և ուղղությունների վերաբերյալ դրույթների ամբողջություն է և հիմք է հանդիսանում ՀՀ գիտության զարգացման 2011-2015 և 2016-2020 թվականների ռազմավարական ծրագրերի մշակման համար:

2009-ին Կոմիտեում մշակված երկրորդ կարևորագույն փաստաթուղթը վերաբերում է գիտության ոլորտի զարգացման գերակա ուղղություններին, որով սահմանվում են գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառում պետական քաղաքականության հիմնական ուղղությունները, նպատակները և դրանց իրականացման մեխանիզմները:

Նախորդ տարի Կոմիտեում մշակվել է նաև ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեությանն ուղղված ֆինանսավորման նոր ձևեր սահմանող որոշման նախագիծը:

Գիտության պետական կոմիտեի նախագահը նշեց, որ գիտության ոլորտի ֆինանսավորման արդյունավետության բարձրացմանն էր ուղղված նաև գիտական փորձաքննություն իրականացնող փորձագիտական համակարգի ստեղծումը և ներդրումը, ինչպես նաև՝ միջազգային չափանիշներին համապատասխան փորձաքննության կարգի կիրառումը: Դա հնարավորություն կտա գիտական ծրագրերի ընտրությունն իրականացնել բացառապես մրցութային կարգով և ֆինանսավորել այն գիտական ծրագրերն ու թեմաները, որոնք միտված են միջազգային մակարդակին համապատասխան արդյունքների ձեռքբերմանը:

**Գիտությունը ծերացել է, իսկ երիտասարդները հեռացել են**

**Հայաստանում գիտնականների միջին տարիքը մոտ է 60-ին**

Եթե խորհրդային կարգերի փլուզումից առաջ՝ 1987-88 թվականներին, Հայաստանում կար 28.000 գիտնական, ապա այսօր այդ թիվը նվազել է 4 անգամ: Ընդ որում՝ շուրջ 7 հազար գիտնականների չնչին տոկոսն են կազմում երիտասարդները: «Սարսափելի կորուստներ ենք ունեցել հատկապես 25-40 տարեկանների հատվածում», - ցավով արձանագրում է Հայաստանի գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը:

Նա վստահեցնում է, որ իրենք անում են ամեն ինչ՝ գիտության հանդեպ երիտասարդների հետաքրքրվածությունը մեծացնելու համար: Մասնավորապես անցած տարի մոտ 40 երիտասարդական դրամաշնորհային ծրագրեր են եղել, որոնց մասնակցել են նաև երիտասարդ հայ գիտնականները: Սամվել Հարությունյանը համաձայն չէ այն կարծիքի հետ, որ բուհական գիտությունը չի զարգանում: Իբրև օրինակ՝ նա նշում է Երեւանի պետական համալսարանը, որը «լուրջ գիտական հիմնարկ է»: «Ամբողջ աշխարհում բուհական գիտությունը ավելի առաջադեմ է, քան ակադեմիականը», - փաստում է կոմիտեի նախագահը:

Մի հետաքրքիր վիճակագրություն եւս. պարզվում է՝ գիտությամբ առավելապես զբաղվում են ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու դարձած անձիք, իսկ ահա, օրինակ, իրավագիտության բնագավառում թեկնածուների միայն 8-10 տոկոսն է հետազայում զբաղվում գիտությամբ: «Ցավոք սրտի, կան գիտական կոչում ստացած մարդիկ, ովքեր, լավ կլինեք, եթե չստանային այդ կոչումները», - ասում է Սամվել Հարությունյանը: Նա նաև նշում է, որ այսօր գիտությունը լավ մենեջերների կարիք ունի: Այդպիսիք պետք է լինեն, օրինակ, գիտական ինստիտուտների տնօրենները:

Հայաստանում այսօր 80 գիտական հիմնարկներ եւ մոտ նույնքան չակերտավոր գիտական ամսագրեր կան: Սամվել Հարությունյանն այս թվերը չափազանց մեծ է համարում մեզ նման փոքր երկրի համար: Այս բոլոր հարցերն իրենց արտացոլումն են գտել Գիտության պետական կոմիտեի կողմից մշակված երեք իրավական ակտերում, որոնք առաջիկայում կներկայացվեն Կառավարությանը: Խոսքը մասնավորապես վերաբերում է գիտության ոլորտի զարգացման ռազմավարությանը, զարգացման գերակա ուղղություններին եւ ոլորտի ֆինանսավորման նոր կարգերին:

Հոռետեսական տրամադրություններին տեղի չտալու համար Սամվել Հարությունյանը տեղեկացնում է, որ չնայած ֆինանսական սղությանը՝ հայրենական գիտությունը զգալի առաջ է անցել հարեւաններից՝ Վրաստանից, Իրանից ու Ադրբեջանից:

**Ջուլիետ Առուշանյան**